

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻՒ 16

11 ՅՈՒՆԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թոմասաւորի մը լիցւոսակին (հմբագրական)

Պզօիկ ուսումնասիրութիւններ. «Գր. Մալխաս» Ռ. ՍԱՄԻԿԵԱՆ
Խօսք ամսոյ (Բերթուած ՇԵԼԼԻ) Գրաբար քարգմ. ՏԻԴՐԱՆ ՆԼԳԵՆՃԵԱՆ
Թժեկական Բրոնիկ.—Արեւելոսեան դէմ Կ. Տ. ԱԼԼԱԶԿԵՐՏԻ
Հայ գրագէտին ներաշխարհը Մ. Կ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
Յայտային (Արձակ բանաստեղծութիւն) Մ. Կ. ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ

Խմբագրական Նօթք.—Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար քառսուն դրօ. եւ գաւառներուն համար յիսուն դրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Թրանք կամ 5 ռուպլի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Զեմբի կը ծախուի շաբաթ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیاده غلطه ده (ماسيس) غرضه سی اداره سی


ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաբիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՍԶՂՈՒՄԻ ՄԻՋԱՏԱՍՄՊԱՆ ԼՓՈՇԻ ՓՆՏՈՌՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐ ՍԶԴ ՄԸ



Կ'ուզե՛ք հանգիստ ու մրցիկ-մրցիկ ֆնանայ ու ազատի
սա աճերես միջաճեճերուն ցուած չարչարանքներէն. ԴԻՄԵՑԷՔ
ՈՒՂՂԱԿԻ

ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆԻ ԴԵՂԱՐԱՆԸ

Մանկոս փառա Պաշի, պողաշահիին դէմ,
քիւ 261

Եւր պիտի գտնէք թարմ եւ առաջին տեսակէն խիստ ազդու
Տալմաճի-ի միակ միջատաւան փաշի, որ վարկենապէս կ'ապանէ ու կ'աշխարհէ միակը
յուն (փիթէ), ոջիւր, հանճը, մծիկը (փիթիթիթէ) ուսինը (փիթիթէ) քրքրքր, ցոռնիկ-ու-
թիւր եւ ուրիշ բնի մը վառաւոր միջատներ ու ճճիներ. այն փաշիները մեծ ու պզտիկ
մասնաւոր առփերու մէջ դրուած պատրաստ կը ծախուին: Ուստի ամէն տեսնէք որոնք
պէտք ունին ազդու միջատաւան փաշի եւ կ'աւղեն գիշերները տնուիկ-տնուիկ քնա-
նալ եւ առողջութիւնն չը խանգարուած արթննալ, թող հաճին դիմել դեղարանս գնե-
լով առփ մը փաշի. քանի որ այս տեսակ պէտք մը գտնանելու համար դեղարանս ունի
իր դիւրութիւնը՝ Պաշի կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելովը: Աւելորդ նկատած
չենք ըլլար հոս անգամ մը եւս յիշեցնել թէ՛ Դեղարանս որ Պաշի: հասարակութեան չը
նորհիւ քիչ ժամանակուան մէջ ջերմ ընդունելութեան արժանացաւ իր ազդարմա գործու-
նէութեամբը, միշտ ծառայելով իր նպատակին, այն է դեղերու թարմութեամբ, դեղագրե-
րու արագ եւ ճշգրտան պատրաստութեամբ, գիշերու չափաւորութեամբ եւ որ աւելին է
արուեստին խղճամիտ գործադրութեամբ միշտ գոհ ձգելով իր աշխիւ լաճախորդները:

Դեղարանս նաեւ Եւրպայական տան մը հետ ալ բանակցած ըլլալով ամէն շաբաթ Զուի-
ցերի-կան թարմ պատաւաստի քիւպիւր (չը գտնէ՛ք) կը հասնին բոսթալով եւ գումառ-
յին լանճախարութիւնք փութով կը կատարուին:

Յիշենք նաեւ ամէն օր Դեղարանս լաճախող Հայ եւ օտարազգի բժշկիկներէն մասնա-
բաբար ծանօթ Բժիշկ Ա.Լ.Ա.Հ.Վ.Ե.Ր.Տ.Ի Է.Ֆ. որ ամէն Գլ. Եւ. Շք. օրեր ժամը 8—11 իրեն
դիմազ հրաւիրները կը դարձնէ իր ծանօթ փաճառութեամբ եւ մասնագիտութեամբը
դեղարանի մասնաւոր դարմանաբանը:

Ահա մաքամը մը պարզելով Դեղարանի ներկայ վիճակը, կը յաւանք թէ որքոյ լա-
ճախարդները ինչպէս ցարդ, լեւ այսու եւս միշտ պիտի շարունակեն իրենց վստահութիւնը
Դեղարանի նկատմամբ, եւ փոխանակ հեռուոր տեղեր դիմելու՝ ազդակի պիտի այցելեն
Դեղարանս, ուր ամէն տեսակ դիւրութիւններ պիտի ընծայուին իրենց կատարելապէս գոհ
թողելու համար, քանի որ Դեղարանի սկզբունքը եղած է ՈՒՂՂՈՒԹԻՒՆ:

ԴԵՂԱՐԱՆՍ ՈՒՆԻ ՆԱԵՒ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐՏԵ ԶՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապանովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապանովագրութիւնք 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԶՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% . որով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութիւնէն :

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծառնաթիւր միջնէն նշանաւոր դատաւորներէն . ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծառնաթիւր երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհուրդի անդամ.

Մ. ՄԱՐՔԻ ՏԸ ՖԼԷՌ, Դառնադուրեմն ընկերութեան վարչական Խորհուրդի անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ, Կիլէի, նաեւ կին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Ք. Էտի Լիօնէի.

Թաւաքիւր Տնօրէն Ք. ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համաժ, Բասաժ Քաթրճոզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Ք. Էտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ. — Ծանաւոր դիմել պիտի տրուի այն ֆնկիցիս որ կատարուի արդիւնք մօ ի սրտինքն ուղղութեամբ : 6—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն ճեսակ բօնաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Քիւրքճիներու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւ հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համաժ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58 :

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօնաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց լատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղեկութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան :

Ադամ վարդեան մեծապէս գոհ թողնում է իր բազմաթիւ յաճախորդները :

Կ'արժէ օր Շուկայ, Կլոզ մօն ընտանայցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար : 6—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳԱԽՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ օտաժօքի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, յղային տկարութիւնները, հին եւ նոր գաղիական ախտերը, Եյս վերջին ախտերը՝ առանց օտաժօքի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ :

Հիւանդ կընդունի մօն օր կէս օրէ վերջը Զօրեքլաթի օրերը միայն ձրի : 6—10

ՏԱՆԵՐԱՆՈՒԹԻՈՒՆԸ

զաւակներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ. երբ անոնց տէքը կը գունատի, մտածմունքի և նեղութեան պատճառ կը լլայ: Եթէ այսպէս տկարացած տղուն մը



SCOTT'S EMULSION

տրուի՝ առողջութիւնը շուտ մը կը վերադառնայ և մտածմունքը կը դադրի: Վասնզի Ըսգոթի Բաղադրութիւնն հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ. միշտ

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԴՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է. Ասիկայ զՁեզ և Ձեր զաւակները դիշեր ու ցորեկ ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշադիր պետք է ըլլալ որ շիշը վրան այս նշանով վարդագոյն փաթեթի մը մէջ է — եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԴՐՈՒԹԻՈՒՆ

փոշկութիւն առած կ'ըլլաք:

Ընչերու վրայ ասոր աւշադրութիւն ընել պետք է:

22

Բոլոր բեղ-բերքները և բեղ-բերքները ինչ ծախէ:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

ՈՐՈՒՅԻ ԿԵԱՆՔԻ, ՕԴԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՄԱՆ ԹՈՇԱԿԻ ՆԻՒՂԵՐ
VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԹԷ՝
 ԲԺՂԿԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԵԱՄԲ ԵՆ ԹԷ ԱՌԱՆՅ ԲԺՂԿԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԵԱՆ
DE Առանց ԲԺՂԿԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԵԱՆ ԵՂԱԾ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ-
BERLIN ԲՈՒՆ ՎՃԱՐԱՄՆԵՐԸ ՆՊՐԱԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՆԵՐՈՎ ԱՆՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ,
 սկսեալ 5 շրուշէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին առ-
 այսկաներով արտադրուելու ուղղակի
 կառավարութեան հսկողութեան ներ-
 քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանրա
 և Քրէտի Լիոնէ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
 ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Պոլիս Քաթրեքթոլու Խան

15-50

ՄԱՍԻՈՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 16

11 ՅՈՒՆԻՍ 1905

ԹՈՔԱՒՏԱՒՈՐԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Թոքախտաւոր մը միշտ կարեկցութիւն կը հրաւիրէ իր վրայ և կտակարար մը՝ երախտագիտութիւն։ Այս երկու զգացումները կը զուգորդուին, բնականաբար, երբ մէկը առաջինին վիճակին մէջ գտնուելու դժբաղդութեան կը միացնէ՝ երկրորդը կարենալ ըլլալու բարեբաղդութիւնը։

Այս ներհակ տպաւորութիւններով համակուեցան թերեւս, — գէթ իմ զգացածէս դատելով, — անոնք որ Արեւելի Սեբաստիոյ Թղթակցութիւնը աչքէ անցուցին չարթուս մէջ։ Զի կարդացողներուն կամ ուշադրութիւն չընողներուն համար՝ լուրը կ'ամփոփեմ երկու բառով։

Հազիւ երսուն տարեկան երիտասարդ մը, Սահակ Պազալեան (ո՛չ հարուստ Պազալեաններէն, Ն. Բ.) որ կըզգար թէ թոքերը կրծուած էին անողոք ակտէն ու մա՛ր մօտեցած էր, իր երեք հարիւր ոսկի արժող սունը կը նուիրէ Սեբաստիոյ Ազգ. Հիւանդանոցին, օրհասական սնարին մօտ հրաւիրելով Հոգաբարձութիւնը ու լրացնելով օրինական ձեւակերպութիւնները։

Անցողաբար, յարգանքի իրաւունք մը ունի նախ Մըր. Փէյրի, քաղքին միսիօնարը որուն տրամադրութեան ներքեւ դնել ուզեր է Պ. Պազալեան իր ստացուածքը, պայմանաւոր կերպով, բայց միսիօնարը ուղղամտութիւնն ունեցեր է չընդունելու՝ տեղւոյն ազգ. կրթական ու բարեգործական հաստատութեանց մէջէն իբրեւ է՛ն կանոնաւորը ու արժանաւորը ցոյց տալով մեր Հիւանդանոցը։ Ու հիւանդը անոր վերածեր է իր կտակը, այս անգամ անպայման կերպով։

Կեանքէն բաժնուիլ չուզող ու մահուան դէմ մաքառող տղու մը համար սեւեռեալ գաղափար դարձող այս մարդասիրական մտածումը, ճի՛շդ այդ մաքառումի վայրկեանին ուր եսասէր մը ամէն բան պիտի մոռնար, յուզիչ բան մը ունի իր մէջ զոր պէտք չէ լռութեամբ անցնիլ։ Սեբաստացիները փառաւոր թաղումով մը ու դամբանականներով արտայայտեր են իրենց զգացումը և թղթական մը արձագանք կը դառնայ այդ զգացման՝ անկեղծ նամակով մը։ Այս կերպով, կարծես անուղղապէս հասկցնել կուզեն մեզի՝ Պոստոյ Հայերուս՝ թէ ո՛ր տեսակ ննջեցեալներուն վերապահելու է փառաւոր կոչուած յուղարկաւորութիւնը, և թէ, միեւնոյն ատեն, գովեստի շռայլութիւն ընելու չէ ամէն դադաղի առջև։

Սահակ Պազալեան հարուստ մը չէր, բայց իր ունեցած քիչը իր համայնքին կը թողու։ Գուցէ առարկողներ ըլլան թէ անժառանգ կը մեռնէր, — եթէ այնպէս է իրօք։ Ուրքա՛ն անժառանգներու մահը կը տեսնենք սակայն շուրջերնիս, առանց բարեգործական մտածումի մը, և մի՛շտ այն «մխիթարութիւնով» թէ հեռուէ հեռու սղգական մը պիտի գայ փրանալ իր անունին ու թողուցածին։

Սեբաստացի Թոքախտաւոր երիտասարդին պարագան տխրաբոյր բան մը ունի իր մէջ և թերեւս բոլորովին անձանօթ մնար մեզի, — որ այնքա՛ն փութկոտ կը հանդիսանանք արձանագրելու քանի մը կտոր մաշած դասագիրքերու նուիրումը աղքատ դպրոցի մը, թէև ո՛չ քլամի համար եղած ըլլան, կամ աննշան նպատտ մը՝ հանրային

հաստատութեան մը, դրուատական տողերով, — եթէ խղճամիտ նամակագիր մը հոգ տարած չըլլար իր «Թղթակցի Խօսքեր»ը անոր նուիրելու: Եւ հակասութիւնը հոն է որ, այդ ծանուցման փութկոտութեանց ու գովեստի շուայութեանց մէջտեղ, կը գտնուին միշտ չարամիտ գրիչներ որոնք իրական բարիքը ու ինքնատիպ նուիրատուութիւնը հեգնելու, խեղաթիւրելու կը ձգտին: Այսպէս, — միակ օրինակ մը յիշելու համար, — երբ Տիար Յովհաննէս Թաւադեան կաբեւոր գումար մը նուիրեց Պատրիարքարանին միջոցաւ՝ քարոզի մրցում մը հաստատելու և լաւագոյն գրուածներէն քարոզագիրք մը հրատարակել տալու նպատակով, պարոնին մէկը յաւակնեցաւ sensationel բան մը գրած ըլլալ՝ գանգատելով թէ ինչ օգուտ կայ կրօնային հրատարակութեանց համար դրամ նուիրելէն. ու այս անգամ ալ, հակաընդդէմ բարերար մրցումին առթիւ, նոյն յաւակնոտութենէն բռնուած, քանի մը պարոններ esprit մը ընել կը կարծեն՝ հեգնոտ տողեր սպրդեցնելով մեկնեալին ու մրցման մասնակցողներուն դէմ: Բարեբաղդաբար, ինչպէս առաջին նոյնպէս և այս պարագային, հանրութեան ողջամիտ մասը ու լրագրութեան լրջախոհ մասը կարեւորութիւն չընծայեցին այդ գերուածներուն որոնցմով չէր արժեք գրադիւարդէն:

Արժանաւոր յարգանքը ընծայել որ և է ազնիւ, բարենպատակ ու հանրօգուտ գործի կամ նուիրատուութեան, անշուշտ չափը պահել գիտնալով, եւ ընդհակառակը՝ գովեստի մասին ժլատ ըլլալ երբ եղածը կամ նուիրուածը շատ հասարակ, շատ չնչին բան մըն է, եկեղեցականութեան ու լրագրութեան համար հաւասարապէս գեղեցիկ ուղղութիւն մը պիտի ըլլար՝ աւելի՛ քաջալերող, աւելի՛ յանկուցիչ դարձնող բարեգործական մրցակցութիւնը, — բաւը իր լաւագոյն իմաստէն առնելով:

Ու, փակելու համար այս փակագիծը — որ ընդհանուր տեսակէտի մը կը վերաբերի, և կրնայ ընդարձակ նիւթ հայթայթել ամէն օր գրելու — կը մտածենք թէ արդեօք Մասիսի

խմբագրութիւնն ալ զեղծանող մը կըլլայ այս հակիրճ խմբագրականը նուիրելով Սեբաստացի Թոքախտաւոր երիտասարդին օրուն անուշը առաջին անգամ կը լսէ և որ թերեւս անգամ մըն ալ չպիտի գայ իր գրչին տակ: Խեղճ Սահակ Պապարեան. իր ծննդավայրի Հիւանդանոցին նուիրած տանը եկամուտը, որչափ ալ փոքրիկ գումար մը, պէտք է յատկացնել մասնաւորապէս Թոքախտաւորներու դարմանումին ու խնամածութեանը. կամ եթէ յարմար պիտի դատուի վաճառել զայն՝ ամբողջ արդիւնքը յատկացնել հիւժախտաւորներու սրահի մը հաստատման, մասնաւոր արձանագրութեամբ մը, ուր կարգան հիւանդները թէ իրենց պէս Թոքերը կրծուած, վտիտ դէմքով ու հազէն տանջուող երիտասարդ մըն էր որ այդ մարմնական տառապանքներուն մէջտեղ, ամէն բանէ առաջ, իրենց վրայ մտածեց, իրենպէսներուն վրայ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ Տեսչութեան հրամանով՝ Սուրհանդակ օրաթերթը երեքշաբթիէն ի վեր անպայման կերպով դադրած կը ֆիայ, կանոնի հակառակ ընթացքի մէջ գտնուած ըլլալուն պատճառաւ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ վանական հաշուոց Դինիչ Յանձնաժողովի անդամներէն ոմանք հրաժարական մատուցած ըլլալով, ինչպէս՝ ծառուցած էինք Մասիսի նախորդ թիւով, Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ անընդունելի դատեց այդ հրաժարականները և որոշեց հրաւիրել յիշեալ անդամները մատուցանելու իրենց աջակցութիւնը Աղգ. Վարչութեան: — Միեւնոյն նիստին մէջ, Խառն ժողովը որոշեց իր համամտութիւնը յայտնել Երուսաղեմի Ս. Պատրիարքին որ յայտադրով մը ծանուցած էր առժամեայ Տնօրէն ժողովի մը կազմութիւնը՝ միաբանութեան անդամներէն:



ՊԶՏԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՐ. ՄԱՆԽԱՍ

Միջակ հասակով, կակուղ լայնեղբ գլխարկ մը սովորաբար որ կը ծածկէ փղոսկրեայ սպիտակութեամբ իր գլխնականի գանկը. իր երիտասարդ դէմքը կ'աւարտի պղտիկ մօրուքով մը ուր քիչ մը ճերմակ ինկած է: Ջլապինդ չարժուածք մը ու նոյնքան արագ քալուածք մը որ կը յիշեցնէ անսեթեւեթ ու ամէն բանի հետաքրքիր զրօսաշրջիկը: Ազատ ու վեհ ձեւով խնդալ մը ունի զոր շատ վայելցուցած եմ իրեն և որ այնքան ճշգրտօրէն կը պատկերացնէ իր պայքարող մարդուն կարագիրը և հեգնութիւնը: Չայնը առողջ և en fanfare. ուսերու թօթուրով մը կը պատասխանէ ընդհանրապէս իրեն համար բոլոր ըսուածներուն, այն ինքնալստահ և աղնուական կրներուն պէս որոնք այլայլիչ են գիտեր երբ ամբաստանութեան մը դո՛հ գացած է իրենց անունը: Այս յատկութիւններէն դուրս ունի նաև սուր միտք մը, հզօր ճանաչողութիւն մը որոնք աւելի ուժգնօրէն ի յայտ կուգան իր տեսակցութեան, իր ձայնին մէջ յաճախ, քան թէ իր գրուածքներուն մէջ միշտ:

Այս մարդն է ահա Դր. Մալխասը, մեր նոր գրողներու լաւագոյն շրջանակին մէջ շահեկան ու հետաքրքրական դէմք մը միանգամայն զոր կ'արժէ ճանչնալ:

Եւ որովհետեւ նպատակս պարզ վայրկեանակն մը գրել չէր միայն իր վրայ, պիտի ջանամ ճանչցնել զինքը հոս թէ՛ իբրեւ մտաւորական, թէ՛ իբրեւ գրող:

Եւ նախ պէտք է ըսել որ Դր. Մալխաս միակն է թերեւս մեր նոր գրողներուն մէջ որ նախապէս պատրաստուած, մշակուած գլուխով ու գրչով մը ելած է հրապարակ: Իր գրական նախափորձերուն մէջ չիկան արդարեւ այն թարթափանքները, թերի բացատրութիւնները, ո՛չ ալ այն կիսատ նախադասութիւնները որոնք իսկոյն կրնան մատնել սկսնակի մը քեքիւն: Ընդհակառակը, այդ գրութիւններուն մէջ որոշապէս կը յայտնուին, կը յայտարարուին իր

մտքի կարողութիւնը, գաղափարներու ճշգրտութիւնը, նիւթը աղէկ մը բացատրելու, հասկցնելու ճարտարութիւնը: Դուռներէք հանդիպած եմ անոնց մէջ անկապակից, անկատար կամ ճապող տողի մը, խօսքի մը, թէեւ ասոր հակառակը պնդողներ շատ կան, անոր համար անշուշտ որ ամէն մարդու տրուած չէ հետալից գրութիւն մը մարտնչու, զայն կարենալ ճաշակելու յատկութիւնը: Եւ իրօք, Դր. Մալխաս դասական, և պիտի ըսեմ նաև, գիտական միտք մըն է աւելի որ կը ձգտի մէկ տողի մէջ շատ բան խտացնել յաճախ, բոլոր այն դասականներուն պէս որոնք աւելի իմաստ, կշիռ ու դատողութիւն կը դնեն գրուածքի մը մէջ քան նախադասութիւն, որոնք աւելի գրուածքին fondը կը փնտռեն քան թէ former: Շարաքանուածք (phraseologie), բառախաղութեան հետ գործ չունի իր գրիչը: Դասական մտքի մը յատուկ նախանձախնդրութիւնով չէ՞ որ առաջին օրէն իսկ իր անունը ճանչցուցած է վիճնական ամսօրեայ Հանդէսով, փոխանակ ձեռագիրը գրպանը դպրոցական շրջանաւարտի մը երկչոտութեամբ Պոլսոյ հայ Սըմբադրատանց անհրապոյր սանդուխներէն մագլցելու:

Եւ արդէն, Դր. Մալխաս շատ կը սիրէ գրականութիւնը՝ կարենալ սիրելու համար իր անունին շուրջը ըլլալիք աղմուկը: Իր արժանիքն ալ պղտիկ չէ և անկարելի է որ համեմատ չըլլայ: Եթէ միակ քմահաճոյք մը կամ, ինչո՞ւ չէ, եթէ միակ հաճոյք մը ունի, այն ալ գրական կարգ մը յարգուած, considéré դէմքերը քննադատելն է, բայց ասանկ ընելով այդ յարգուած դէմքերուն փնաս մը բերել չէ եղած իր նպատակը, ընդհակառակը, գրական հրապարակին վրայ աւելի նախամեծար կը համարի մեծերով դրագիլ և բացելիքայ ըսել անոնց հանդէպ դժացածը, գիտցածը, քան թէ անկիւն մը քաշուած չարամիտ ակնարկութիւններ ուղղել ասդին սնդին, դնդուսեղի հարուածներ տալ ասոր անոր: Ո՛չ իր նկարագրին, ո՛չ ալ իր

խմորին մէջ կայ կարգ մը գրողներու յատուկ այս անիմաստ ու տղեղ ունակութիւնը: Իր գրածները ուշադրութեամբ կարդացող մը պիտի զգայ խնդիր թէ իր նպատակը, իր փափաքը աւելի distinguer ըլլալ է անոնց մէջ որոնք distinction մը ունին արդէն, աննշաններուն հետ գործ չունի. գոնէ այսպէս ընելովը բան մը վրայ տուած չըլլար և հաճոյքն ալ կ'ունենայ ընդհակառակը, դանաղանամ, անշատած ըլլալու գրական կեղծ դէմքերը իրական դէմքերէն, սովորեցուցած ըլլալու գրական արուեստը, մտքի վայելչութիւնը այնպէս ինչպէս որ ինքը սովորած է Պուալօններէն, Ֆէնէլօններէն և Շալթօպրիաններէն:

Որովհետեւ այս վերջիններուն գաղափարներովն է, ճաշակներովն է որ պարարտացուցած է իր միտքը և դայն documenté վիճակի մէջ դրած, հաւասարապէս իր մէջը ուժովցուցած է կամքը որ կրնայ հոսանքին առջև չընկրկիլ և դէմ դնել ալիքին: Մնաց որ, գրականութիւնը իբրեւ արուեստ մը կը սիրէ և ո'չ թէ պատուոյ և շահու գործ մը իբրեւ, ինչպէս որ եղած է շատ մը ուրիշներու քով: Տարօրինակ բան, այս մարդը որ ճշմարիտ publicisteի մը խմորը ունի, շատ բան պիտի կորսնցնէր եթէ թերթ մը ունենար ձեռքին տակ: Յետոյ, աշխատիլն ալ, ուսումնասիրել ու կարդալն ալ շատ կը սիրէ, կարենալ սիրելու համար monder: Եթէ ընկերութեանէն փախչող մը, առանձնակեաց մը չէ, էթիգէթի մարդն ալ չէ սակայն, ինչպէս չէր Ֆէնէլօնի նկարագրած այն պարկեշտ քիբը որուն անունը մտքէս կը վրիպի այժմ և որ մի միայն կը հագուէր մարմինը ծածկելու համար: Ո'չ շատ անիութութիւն կը դնէ հագուածքին մէջ, ո'չ ալ չափազանց խնամք. պարզ է. laisser aller մը ունի և քիչ մը sans façon է բայց արտաքինէն խաբուելու չէ'. իր ներքինը աւելի կ'աշմէ արտաքինէն, ինչպէս իր միտքը աւելի գերադանց է գրիչէն որ յաճախ բուռն դարձուածքով մը մոլորեցուցած է ղինքը և իր գաղափարները գէշ կերպով արտայայտած: Գր. Մալխաս խօսող ալ է, causeur է. իր բերնին մէջ պատրաստ կան սիրուն և սրամիտ բառեր, խօսքը չի կորսնուիր բերնին

մէջ, այլ կ'արտասանուի յատկօրէն, սուր և առոյգ ձայնով մը: Չարութիւն չի կայ իր ըսածներուն մէջ, այլ, միայն հեգնութիւն, անվաս հեգնութիւն: Մալխաս որ հեգնասէր է, կատակասէր է երբեմն, բարի է յաճախ, համակրելի է բնաւորութեամբ. ճիշդ մարդ է, ուղիղ մարդ է որուն հետ չեա ուղեր գժտած մնալ: Թէև իր դէմքը առաջին վայրկեանէն չի ներչնչեր քեզի այդ վստահութիւնը, այդ համոզումը, բայց անիկա խելացի արտայայտութիւն մը ունի որ կը հրաւիրէ ուշադրութիւնդ. խուշարկող, հարցաքննող աչքեր կան այդ դէմքին վրայ և իր նուրբ շրթունքները սուր մտքի մը գաղափարը կուտան: Եւ իր ամբողջ մարմնոյն վրայ, իր ծեղծեցոտ շարժուածքներուն մէջ, յանկարծական ընկրկումներով ընդհատուած իր ուստոստուն քալուածքին մէջ, վերջապէս իր դէմքի մորթին վրայ որ երբեմն ներքին խորհուրդի մը ազդեցութեան տակ կը յուզուի, կը գալարուի և երբեմն հետաքրքրութեամբ կը համակուի, կը պարուրուի, անկարելի չէ նշմարել և զգալ ցուքերը, ստուերը այն շարունակական տպաւորութիւններուն, այն վայրկեանական զգայնութիւններուն որոնք տեղի կ'ունենան իր ներսիդին, իր հոգիին մէջ, տեսակ մը ջղազրգուութեամբ որ ունի ունի սակայն հիւսանդագին:

* *

Իբր գրող, Գր. Մալխաս առաջին անգամ երեւցաւ Պոլսոյ մամուլին մէջ Լ. Վ. Ֆոն. քեֆի առակներին թարգմանութեան առթիւ իր գրած քննադատականով: Տարիներէ ի վեր Գառնիկ Ֆնտզեանի իբր գրական քննադատութեամբ պարապը զգալի էր իրօք եւ Գր. Մալխաս կը թուէր կոշուած ըլլալ այդ պարապը գոցելու: Դեռ իմ մէջս կ'ապրի այն հզօր տպաւորութիւնը զոր ունեցայ ատենին, իր այդ քննադատութիւնը կարդալով: Անոր մէջ, Գր. Մալխաս ի յայտ կուգայ ֆրանսացի professeurի մը պէս՝ երբ կը ջանայ ճշգիւ բառերուն իմաստը, լեզուին գաղտնիքները, նրբութիւնները, ճիշտ, մասնաւոր նրբութիւնները որոնք արդարեւ ամէնէն աւելի կրնան յոգնեցնել, սպառել թարգմանիչը եւ որոնց սակայն քիչեր կան

գժրախտաբար կարեւորութիւն տուող, երբ խնդիրը անպատճառ բան մը հայացնելուն մէջ կը կայանայ եւ ոչ թէ գրականապէս արժէք ունեցող գործ մը խղճմտօրէն թարգմանելուն, զայն հմտօրէն ներկայացնելուն մէջ։ Ապաքէն, Լաֆօնթէնի առակները սովորական գիրք մը չէ։ Քննադատներու ձեռքին մէջ անիկա եղած է ճիշտ այն հողոտ, չգտուած մետաղին պէս որուն մէջ սակայն գիտութեան մարդը մէկ տկնարկով կը գուշակէ ոսկին։ Իմաստասէրներ այդ գիրքին վերլուծումը ըրած են եւ մարդկութեան ամբողջ հոգին գտած են անոր մէջ։ Դպրոցականներ գոց ըրած են այդ առակները, ինչպէս ժամանակաւ Աթենացիք գոց կ'ընէին Հոմերոսը։ Վերջապէս, այդ գիրքը ընդհանրական դիրք մը եղած է, միջազգային երկ մը որով ամէն մարդ զբաղած է եւ ո'չ ոք չէ՛ եղած որ չը սիրէ զայն։ Այդ գիրքը ամբողջ կեանքը պատկերացուցած է այնքան ճշմարիտ գոյներու տակ եւ այնքան այլազան ձեւերու մէջ։ Հարուստը, աղքատը, ազա՛նը, աղնուականը, սիրահարը, յաւակնոտը, չարը, բարին, մահը, ինչ գիտնամ ես, ամէնքն ալ իրենց տեղը ունին հոն եւ բոլոր անոնք իրենց լարմար անկիւնը, իրենց պատշաճ չրջանակը գտած են հոն։ Այդ գիրքը ամէն մարդ հասկցած է, որուն բոլոր գործածական բառերը կան հոն, տնական բառերէն սկսեալ մինչեւ իշխանական սալօնի բառերը, փողոցի բառերը, նոյն իսկ կապելաներու բառերը։ Իշխանին եւ Ողիսականին պէս, Լաֆօնթէնի առակներն ալ մէյ մէկ առանձին պատմութիւններ են որոնց ամբողջութիւնը կը կազմէ սակայն կեանքի չէնքը։ Ետոյ Լաֆօնթէնի ոճը իտալական է, այսինքն զուարթ, հեգնող եւ փրանսական ստոյգ բացատրութեամբ *haché menu* այն ոճը որ հիմա յաճախադէպ է նոր գրիչներուն համար եւ որ նուրբ ու սուր միտքերու հրամցուած է մասնաւորապէս։

Եւ չմոռնանք որ Լաֆօնթէն միակ հեղինակն է որ ոտանաւորը գրած ըլլայ ուզածին պէս, միշտ նոր ձեւի տակ, միշտ տարբեր իրարմէ, երբեմն երկար, երբեմն կարճ

տողերով։ Քսան տեսակ ոտանաւոր ունի, երբեմն տաղի մը պէս ներդաշնակ, քերթուածի մը չափ հանդիսաւոր, երբեմն երգի մը նման քաղցր եւ պարզունակ։ Հեղինակը ինքզինքը նմանցուցած է «մեղուն, թիթեռնիկին» որ ծաղկէ ծաղիկ, թռփէ թռփ կ'երթայ կը չրջի։ այլազանութիւն մը կայ այդ գիրքին մէջ։ Լաֆօնթէնի զգացումները անգամ կարճ կեանք ունին, չուտով կը փոխուին, վայրկեան մը տխրութիւն ունի անիկա, վայրկեան մը խնծիղ, մերթ կը վերանայ դէպի բարձր հորիզոնները բանաստեղծութեան, մերթ կը լքէ ինքզինքը մարդկային է՛ն մութ միջավայրին մէջ։ Լաֆօնթէն միջակ բանաստեղծ մը չէ, միջակ հեղինակ մը չէ։ Թող չի կարծուի թէ գայլով, աղուէսով կամ ձգուռով ժամանակ անցուցած է միայն եւ թո՛ղ չըսուի թէ խոհանոցներու, հաւնոցներու եւ դաշտերու վրայ գրած է միշտ։ Իր մէջ հղար երգիծաբան մը կայ, փիլիսոփայ մը որ մարդկութեան երեսին խնդացած է անոր մոլութիւնները մէջտեղ դնելով կենդանիներու մորթին եւ դիմակին տակ եւ անանկ լեզուով մը որ «զատ ակադեմիի մը կը վերաբերի» ինչպէս քսած է Լիտլիթ Թէն։ Արդ, երբ բոլոր մեծ միտքերը խոստովանած, վճռած են իսկ թէ Լաֆօնթէնի առակները պարզ գիրք մը չէ, յանդգնութիւն պիտի ըլլար պարզապէս ենթադրել թէ չատ դիւրին բան է հայացնել զայն կատարելութեամբ։ Ատենին բաւական մեծ եւ երկար լինճաբանութեան մը դուռ բացաւ այս թարգմանութեան առթիւ Մալխասի գրած քննադատութիւնը որ ապահովապէս դիմացինին միայն բառական սխալները ուղղելուն մէջ չէր կայանար, ինչպէս կարելի եղաւ համոզուիլ վերջէն, բայց չգիտեմ ինչու տեղի ունեցան այն չարակամ ամբաստանութիւնները որոնք նպատակ ունէին խեղաթիւրել իր գրական կարողութիւնը, իր քննասիրական բարի տրամադրութիւնները։

Կրնայ ըլլալ որ իւր գրական քննադատութիւնը անհրապոյր կողմեր ունենայ, չեմ հակառակիր։ հայրեր կան որոնք ապականով կը կրթեն իրենց զաւակները, թերեւս Գր. Մալխաս սիրէ գրիչով հարուստեղ անոնք որ

սխալներու վրայ հիմնուած գրական կտորներ իբրեւ մէյմէկ կատարեալ գործ կ'ուզեն ներկայացնել . իր խիստ մարդու բնաւորութիւնը կրնայ ազդած ըլլալ իր գրելու կերպին վրայ ալ . բայց ինչ որ ըլլայ, անուրանալի է թէ Գր. Մալխաս, գրական քննադատ մը ըլլալու պէքէ ամէն յատկութիւնները ունի : Գրեթէ ըսի, որովհետեւ քննադատական գպրոցը շատ մը հայեցակէտներ, բաղձադան պահանջումներ ու փոփոխականութիւններ ունի, մէկ հիման մը վրայ դարձող գաղափարականութիւններ կան հոն, գիտական միտք եւ անհատական ապացոյցութիւններ անհրաժեշտ են հոն : Սէնթ-Պէով, քննադատական գպրոցին փայլուն հիմնադիրներէն մին, իր անձնական նկարագրին եւ իր մտքի արտակարգ կարողութեան ուժովը հաստատած է իր մէթօտը՝ Ռընան, նուրբ վերլուծումը մտքուցած է քննադատութեան մէջ, մինչդեռ Թէն հզօր արամսքանութիւնով մը ու փիլիսոփայական ակնարկներով քննած է ամէն բան :

Գր. Մալխաս այս գպրոցներէն որին պատկանած կրնայ ըլլալ, ո՞վ է իր վարպետը կամ որուն ուզած է ինք աշակերտիլ : Իր քննադատութիւններուն մէջ որոնք յաջող փորձեր են աւելի, չերեւնար այն նուրբ վերլուծումը որ գործին յոռի կողմերը պիտի մէջ բերէ՝ ազէկ կողմերը արժեցնելով . հոն չերեւնար նաեւ այն հզօր արամսքանութիւնը որ քննադատուած երկին ամբողջութենէն դուրս պիտի ցայտեցնէր գէշ կամ լաւ յղացումը . վերջապէս Գր. Մալխաս մասնաւոր մէթօտ մը չէ ստեղծած ինքզինքին՝ անով կարենալ զնահատելու համար գործի մը արժէքը, գիտումները (visée), բայց ունի հմտութիւն մը, գրական հասկացողութիւն եւ խորհրդածութիւն մը որուն շնորհիւ կարող եղած է մէկ հարուածով ճշդել յաճախ գիրքին թերութիւնը, պակասութիւնները : Լաֆօնքէի առակները ինչպէս նաեւ ուրիշ կարգ մը թարգմանութիւններ քննադատելով, Գր. Մալխաս առիթը ունեցած է ապացոյցանելու իր հիմտութիւնը, փորձառութիւնը թէ՛ ֆրանսական լեզուին, թէ՛ գրական բարեշրջութեան մէջ :

Դժբախտաբար երկարաշունչ ու մեծ գործեր, թարգմանութիւններ չիկան մեր մէջ որպէս զի քննադատութիւնը աւելի դժալի ընէ իր պակասը եւ միանգամայն քննադատ մը հետզհետէ նոր քուէներ վաստկի ընթերցող հասարակութենէն : Այս առիթը պակաս է նաեւ Փորձ մը ֆնասիրութեան վրայի թարգմանչին որ թերեւս կարենար նոր հայեցողքներ պարզել քննադատութեան վրայ եւ նոր ապացոյցներ տար իր գրողի կարողութեան վրայ : Բայց եւ այնպէս, գիրքերու պակասը պատճառ մը չէ եղած որ Գր. Մալխաս գրիչը մէկ կողմ դնէ, իր միտքը չէ ծանցած արգէն արտադրութեան սովը : Ի չգոյէ անկոխ գետիներու, անցած է դարձեալ գրական կարգ մը ծանօթ ուղիներէ եւ նոր տատասկներ փնտռած, գտած է հոն : Հայր Արսէն Բագրատունիի վրայ գրուած ընդարձակ ուսումնասիրութեան մը մէջ, քննադատած է լեզուական կարգ մը խնդիրներ որոնք աննշմարելի մնացած էին իրմէ առաջ : Միշտ նոր բան մը գտած է ըսելու : Մէկ երկու տարուան շրջանին մէջ, յաջորդաբար Մասիս, Արեւելեան Մամուլ, Ծաղիկ, եւ մինչեւ վերջին օրերս ալ Արեւելք, հրատարակած են իր կարգ մը քննասիրական պզտիկ ուսումնասիրութիւնները որոնք անգամ մըն ալ կը բարձրացնեն իր ճարտար գրողի յատկութիւնները : Այս յօդուածներուն մէջ մանաւանդ «Դրաբարի Սափրիչները», «Մարողական ուղղութիւնը» վերնագրով տեսութիւնները շատ բան ունին իրենց մէջ գրականապէս դիտուած, ուսումնասիրուած . espritն ալ բացակայ չէ անոնց մէջէն : Նոյնպէս, իր «Խոհալ լեզուն», «ազնուական լեզուն» եւ «փողոցի լեզուն» խորագրով գրութիւնները որոնք յաջող trilogie մը կը կազմեն, մասնաւոր ձգտում մը ունին ներկայացուցած դէպի գրական ազնիւ սահմանները : Իր այս ուսումնասիրութեանց մէջ Ժիւլ Լըմէթրի մը ֆանթեզին կայ եւ Պրիւսթիէրի մը վարդապետութիւնը : Միակ հիմ մը չունի թէ եւ որուն վրայ կարենար քննադատական համեստ գպրոց մը կառուցանել, բայց ամէն նիւթի վրայ միեւնոյն գիտակց

ցութեամբ և խնամքով է որ կը գրէ, ամէն խնդրի մէջ նոյն առողջ տեսութիւնները ունի, միեւնոյն գաղափարները կարող է պարզել միշտ տարբեր ոճով ու տարբեր ակնարկներով, կաղապարներով: Մասնաւորներու համար չի գրէր, բայց կուգէ որ խօսի և գրէ լեզու մը որ դպրոցներու մէջ ալ կարդացուի, հասկցուի, ժողովուրդին մէջ ալ, գրական ընկերութիւններու մէջ ալ հասարակէս:

Եւ Գր. Մալխաս կ'աշխատի միշտ, կը պատրաստուի աւելի կարեւոր ուսումնասիրութիւններ արտադրելու, հանդարտօրէն, համբերատարօրէն: Կ'աշխատի կարգ մը զբոսական ծանօթ երկերու վրայ իր անկողմնակալ քննադատութիւնները հրատարակելու, այն գիրքերուն վրայ որոնք գրական շրջանի մը բարձրը և գաղափարները կը ներկայացնեն: Սրբուհի Տիւսաբի Մայսաին վրայ երկար ուսումնասիրութիւն մը ունի պատրաստ, բայց զայն չհրատարակած կը գրէ արդէն երկրորդ մը, նոյնքան ծանօթ ուրիշ երկի մը վրայ: Եւ բոլոր այս լուրջ աշխատութիւնները գուշակել կուտան մեզ, հարեւանցի կերպով, այն փութաջան եռանդը, կամքը որ կան իր բնաւորութեան մէջ, իր խառնուածքին մէջ: Այս խմորը, այս միտքը ունեցող գրող մը արժանի է ամէն ուշադրութեան, համակիր հետաքրքրութեան մը:

* *

Չի վերջացուցած, կարելի է ըսել թէ Գր. Մալխաս մերնոր գրողներուն մէջ միակն է նաև որ ամէն կողմէ գրչի յարձակում կրած ըլլայ: Իրեն վերագրուած են կարգ մը հրապարակագրական գաֆեր, լեզուական սխալներ զորս քիչ մը աւելի բարեացակամութեամբ կարելի էր մեղմացնել: Բայց ինքը գրապայքարի մարդ նմանապէս, բնաւ չէ կորսնցուցած իր պաշարիւնութիւնը և խիզախօրէն, յարատեւօրէն պատասխանած է բոլոր յարձակումներուն: Այսպէս, երբ գիրքի ձեւով հրատարակեց Աղեքսանդր Բօբի Փորձ մը քննաքննութեան վրայ հատորին թարգմանութիւնը որ նախապէս պարբերաբար երեւցած էր Հանդէս Ամսօրեայի մէջ, իրեն

դէմ եղած քննաքննութիւնը տեղի տուաւ կատարեալ վարկաբեկութեան մը, գրական հաւածանքի մը: Այս վարկաբեկութիւնը անշուշտ առօրէն propos նկատուած է բոլոր անոնց կողմէ որոնք տուած էին նախապէս Գր. Մալխասի գրչին երեսէն, բայց միւս կողմէ աւելի ամրապնդեց իր համբաւը և օրուան մարդը ըրաւ զայն: Ասանկով ապացուցուած եղաւ նաև թէ մեր մէջ ճշմարիտ քննադատութիւնը չէ դադարած տակաւին նկատուելէ այն գրական ապերախտ սեռը որ անհաշտ պայմաններու տակ ապրած է միշտ, խախուտ հիմերու վրայ դրուած տկար ու ճղճիմ մտաւորականութիւններուն հետ: Հզօր միտք մը, հզօր անհատականութիւն մը քննադատութեանն չի խուսափիր, չի խրախուսէր, բայց դժբախտաբար ասոր բոլորովին հակառակը եղած է մեր մէջ:

Մնաց որ, տեսակ մը համեստութեամբ որ պատիւ պիտի բերէր իր անձին, Գր. Մալխաս չէ պնդած երբեք թէ իր թարգմանութիւնը անթերի է: Այս թարգմանութիւնը Մալխասի առաջին քայլն է և գիտենք որ ինչ կարժէ առաջին քայլը: Յետոյ, ինչպէս Ալֆօնս Տօտէ ըսած է տեղ մը. «Միտքէն մինչև գրիչը եղած կարճ միջոցին մէջ երկար ճամբորդութիւն մը կայ»: Այս մտաւորական երկար ճամբորդութեան մէջ կրնան կարգ մը սխալներ գործուած ըլլալ, վրիպանքներ տեղի ունեցած ըլլալ: Եթէ Փորձ մը քննաքննութեան վրայ գիրքը Գր. Մալխասի մշակած գրական պարտէզին մէջ փուշ մը եղաւ, հոն այցելողներուն աչքին, է՛հ ուրեմն, կարելի է ըսել թէ դարմանումը չի պիտի ուշանայ: Հայերէն լեզուին գեղեցկութիւնը և ճոխութիւնը ապացուցանող թարգմանութեամբ մը Գր. Մալխաս մօտ օրերս հրապարակ կը հանէ Կոնգուս Եղբարց մէկ ընտիր գործը որուն տպագրութիւնը աւարտած է արդէն և որ կոչուած է ըլլալ իր մէկ փայլուն յաղթանակը անոնց դէմ որոնք իր լեզուագիտութիւնը, իր գրական հմտութիւնը կասկածի տակ դնել ուզեցին:

«Ասխարհիկն քաղցր է բաժինը»:

Բ. ՍԱՄԻԿԵԱՆ

ԾԱՆՈԹԱՅԻՆ

Մարաւանիւծ ծաղկանց ածեմ տեղ տարափ
 Ի ծոցոյ վտակաց, Ի ծոցոյ ծովուն.
 Զով հովանի տամ սաղարթուց անսոսափ
 Որք Ի մէջօրեայ թըմբերեալ կան Ի քուն.
 Ի թօթափել թեւոց իմոց սրբակի ցօղ
 Իւ ծաղիկք և ծիւղք կենդանածնին նոր,
 Մինչ որրէ զայնս Ի քուն՝ իւրեանց Մայր ծընող
 Զարեգակամբ հիւ եկեալ պարաւոր.
 Ծօծեմ ըզթակն ըզգոռ և կուռ կարկըտին,
 Ի գոյն ըսպիտակ շըրջեմ զգալար խոտ,
 Եւ՝ քըրքջածայն՝ յանձրե յեղում վնոյն կըրկին,
 Յանցանել իմում որոտ առ որոտ:

Մաղեալ սրփում ձիւն ըզլերամբք բարձրբարձ
 Ի մռնչել շոճեացըն զարհուրելոց.
 Ըզցայգս ողջոյն զեղեամն ունիմ գըլխոյս բարձ
 Յորժամ նընջիցեմ յամպրոպաց Ի ծոց.
 Փայլակն՝ յիմում երկնակառոյց դըղեկի
 Առաջապահ ինձ նըստի բարձրաշուք,
 Որոտք առ ոսոս նորա բանտեալք ուժգնակի
 Ընդ ոգիս կըռուեալ՝ մըռմըռն մռնչիւք.
 Առաջապահն իմ այն ընդ ծով ընդ երկիր
 Հանդարտահետ ուն ինձ հորդէ մեղմով,
 Հըրապուրեալ Ի սէր Ոգեաց բարեկիր՝
 Որք խոպան խայտան ընդ ծիրանի ծով.
 Թէ՛ պէտ բըլրոց, Թէ՛ պէտ ժայռից Ի վերայ
 Խոկայցէ Ի կախ նա թեւատարած,
 Ոգին սիրուն Ի նմանէն ո՛չ հեռանայ
 Ե՛ւ առ արին առուի, Ե՛ւ Ի ծոց ծմակաց.
 Եւ ես ջեռնում յերկնից ժըպիտ կապուտակ՝
 Մինչ նա լուծանի Ի չիթս անձրեաց:

Այդ շառագոյն, հրաքերձական լոյս բըրք,
 Բոցաափիւ փետրովքն իւրովք հոլաթեւ,
 Ի նըւաղել ցայդոյ փայլմանցն անբորբոք՝
 Աշտանակէ շե՛շտ Ի ծուէնս իմ թեթեւ.
 Որպէս արծուի Ի պարեխաց խոր փապար՝
 Զոր գեանաշարժին փեռեկեաց թընդիւն,
 Վայրկեան մի սուղ առնուցու զկայ և դադար
 Ի լայն հովանոջ թեւոցն ոսկեգոյն.
 Եւ մինչ Արեւ ըզսիրառարփ շունչն ընդդր
 Շընչիցէ նոգ երեկս Ի հրաչէկ ծովուց,
 Ու երեկորին բոսորագոյն վարագոյր
 Անկանի յերկնից խորանդունդ ալուց,
 Հարթեալ ըզթեւս՝ աղաւնակերպ հանգչիմ ես
 Խաղաղեալ յիմում բունին օղաթոյց:

Սպիտակալոյս գրնդատեսիլն այն տիկին
 Որ կոչի Լուսին, ընդ աղօտ փայլմամբ
 Ի դողդոջեալն առ ի շնչոց գիշերին
 Յասրաքատակ յիմ ճեմի պատըգամբ.
 Եւ մինչ անտես ոտիցն իւրոց ճեմելիք—
 Զորոց խօշիւն լոկ Զըւարթուն լըսէ—
 Զիմոյ վրանիս ցելուն ձեղուն անօսրիկ՝
 Կայծք հային դաղաուկ ծերպիցն յետկուսէ :
 Ծիծաղիմ ես, ըզլուսաւորս մինչ դիտեմ
 Պըտուտեալ ճեպեալս պէս ոսկի մեղուաց,
 Ըզպատառուածս լայնեմ վրանիս. օդածեմ,
 Մինչեւ ծովք անդորր և լիճք լըռակաց,
 Իրրև պատառք երկնից հոսեալք ի ծոցոյս՝
 Նըման կայծանիչ առնին յատակաց :

Ի հուր պատեմ զԱրևուն գահ ընդ եթեր,
 Եւ Լուսնին ածեմ զմարդարտեայ գօտին.
 Յորմամ մըրբիկք տարածանեն զիմ ըստուեր՝
 Մըթնին սարք հրածայրք, լոյսք ի մութ ծըլիին :
 Սարաւանդից ի սարաւանդս ըզծովուք
 Զեղուանանամ ձիգ և կարակնաձև,
 Անկէզ ի հոյ արփւոյն՝ կախիմ մեծաչուք,
 Ըզլերինս ունիմ զերդ սիւնս ընդ ինև.
 Ըզգօրութիւնս օդոց կապեալ զաթռոյս,
 Աղեղն ըզգըլսով իմով բիւրերփեան,
 Արբանեկօքս հըրով և ձեամբ մըրբկայոյղ՝
 Արփայագընաց ճեմիմ յաղթական,
 Հրեղէն երկինք զերանգս իւրեանց նիւթեցին
 Մինչ ցընծայր երկիր իսիր ցօղագին :

Հողոյ և ջրոյ դըստրիկ եմ ես թեւազգեաց,
 Եւ խնամոցն երկնից դըրգանաց մանուկ.
 Յերկրէ սըրտէ ցոլանամ ես և յալեաց,
 Անմահ եմ բնութիւն, թէպէտ յեղյեղուկ.
 Զի մինչ երկինք զըմբեթայարկ վրանաձև
 Յետ թօնընկեցաց պարզեալ յըստակին,
 Եւ զօդեղէն բարձանցըն հողմք և արև
 Զկապոյտ կորնթիսն յօրինեն կըրկին,
 Զի. ու թափուր չիւմաւ ես լուռ ծիծաղիմ,
 Ու ի համբարոց ջուրոց յարուցեալ նորոգ—
 Զերդ ուրուական թողեալ ի բաց ըզչիրիմ,
 Կամ մանուկ ծագեալ յօրովայնէ մօր—
 Գամ վերըստին սըլուիմ զերկնից զերեսօք :
 Շէկի

Թարգմ. յանգլիականէ
 ՏԻԳՐԱՆ ԵՒ ՔԵՆՃԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

«ԱՐՔԵՅՈՒԹԵԱՆ ԴԵՄ»

Այժմը սնունդը և թեքումը. — Հետաքրքրաշարժ վիճակագրութիւն մը. — Պայքար ոգեկից քմ պեղիներու դէմ. — Ժորժ Օնէի «Այնպիսի»
նաւը» :

Թէև այսօր ա՛լ չկերջնականապէս հասկըցուած է թէ ալքոլը բացարձակ թոյն մըն է և սակայն անհասկնալի, անդուսպ կալըրօշէթի մը ապուեցուցիչ ճարպիկութեամբ կարծես որոշած է այդ ցնդական հեղուկը գիտութեան ջոշերուն երեսին լսնդալ :

Բասթէօրեան Ալլաւատանոցին հանգուցեալ Տնօրէն Տօքթ. Տիւքլօ, սնունդ մըն է ըսած էր ալքոլին համար և *Annale de l'institut Pasteur* շարունակ անոր գովասանքը կ'ընէր ժամանակ մը, ներկայացնելով զայն իբրև *aliment d'épargne* : Մինչ անդին Լայտըն, Վասըրման, Էշրիհի պէս գերման բրոֆէսօրներ, Տիւժարտէն—Պոմէյ. Կռասէ, Պուչառ, Տըպօլի պէս ֆրանսացի փորձառու և անուանի բժիկներ հակառակը կը պնդէին և ջախջախիչ կերպով կը հաստատէին թէ ալքոլը ապագայ սերունդը փճացնող, աւերող, քանդող հեղուկ մըն է միայն և ոչ այլ ինչ : Եւ ես ալ ճիշդ այս նկատումով է որ կը փորձուիմ ընդհանուրին ուշադրութեան ներկայացնել շահեկան վիճակագրութիւն մը որ պատահամբ Մէքսիկո-մօսկովի հաւաքածոները թղթատած պահուստաչքիս հանդիպեցաւ և որ մասնաւոր այժմէութիւն մը կը ստանայ մանաւանդ հիմա՝ ուր բոլոր մեր թերթերը յօդուածներ կը նուիրեն ալքոլամոլութեան աւերիչ ընթացքը կասեցնելու համար :

Ակնյայտնի իրողութիւն մըն է թէ այս մասին ամէնէն գեղեցիկ արդիւնքը առաջ եկաւ Օգոստափառ Սուլթանին այն Կայսերական հանրօգուտ Իրատէով որ Իսլամներուն համար բացարձակապէս կ'արգելուր ոգեկից ըմպելիներու գործածութիւնը :

Վիճակագրութիւնը զոր պիտի ներկայաց-

նեմ, թէպէտեւ մի՛ միայն Ֆրանսայի և Ֆրանսացիներուն կը պատկանի և սակայն այն հետեւութիւնները զորս ամէն մարդ պիտի հանէր անոր մէջ արձանագրուած թուանշաններէն, կրնան պատշաճիլ ո՛ր և է երկրի, ո՛ր և է ազգի :

Չարիք մըն է ալքոլը որ ամէն տեղ միեւնոյն աւերը կը գործէ, որ ամէն տեղ միեւնոյն ահաբեկ արդիւնքը առաջ կը բերէ :

Ֆրանսայի մէջ, ալքոլի սպառման համեմատութեամբ աւելցած է նաև դիւնտուններուն թիւը, ինչ որ շատ բնական է արդէն : 1850ին 281,847 դիւնտուններ կան եղեր Ֆրանսայի մէջ, մինչդեռ այսօր անոնց թիւը կը հասնի 600,000 և ա՛լ աւելի : Այդ դիւնտունները եօթանասուն տարուան ընթացքին մէջ հետեւեալ համեմատութեամբ նըպաստած են ալքոլի սպառման. —

1830ին՝	300,000	հեքտոլիտր.
1848 »	600,000	»
1880 »	1,313,000	»
1900 »	1,850,315	»

Այս թուանշանները բաղդատելով Ֆրանսայի բնակիչներուն հետ, ալքոլի սպառումը մարդ գլուխ հետեւեալ համեմատութիւնը կը ստանայ. —

1830ին՝	2 լիտր	24
1848 »	4 »	4
1880 »	8 »	
1900 »	14 »	

Ասիկա միջին թիւ մըն է անշուշտ. անդին կան դեռ անանկ նահանգներ՝ որոնց մէջ այդ թիւը շատ աւելի մեծ համեմատութեան մը կը հասնի, ինչպէս օրինակի համար, Սէնի, Ռուանի, Ուոթի մէջ, որոնք շատ մեծ քանակութեամբ օղի կ'արտադրեն : Այսպէս, օղիի սպառումը Սէնի նահանգին մէջ՝ 27 լիտրի կը հասնի մարդ գլուխ, Ուոթի մէջ՝ 19 լիտրի : Իսկ Ռուանի մէջ ուր արքեցութիւնը շատ աւելի տարածուած և արմատացած է, տարեկան 5,500,00 լիտր ալքոլ կը սպառուի, ինչ որ բնակիչներու թիւին հետ բաղդատելով՝ մարդ գլուխ տարեկան 47 լիտրի սպառում մը կ'ենթադրէ, աղաքն ալ միասին հաշուելով :

Նոյն համեմատութեամբ աւելցած է նաև սպառումը ապսէնթին որ ոգելից ըմպելիներու ամէնէն վտանգաւորը և վնասակարն է միանգամայն: Մինչև 1885, Ֆրանսայի մէջ 57,732 հեքտոլիտր ապսէնթ կը սպառուէ եղեր: Եօթը տարի վերջ, 1892ին՝ այդ թիւը բարձրացեր է 129,678ի և անկէ ի վեր ալ կ'աւելնայ եղեր հսկայ քայլերով:

Ալքոլին պատճառած վնասները մինակ փիղիքական չեն, նիւթական վնասն ալ մեծ է և նոյն իսկ կործանարար: Ընդհանուր Ֆրանսայի մէջ ոգելից ըմպելիներու սպառումը մէկ միլիառ երկու հարիւր միլիոն ֆր. ի կը նստի ժողովրդին ու կառավարութեան՝ որ ստիպուած է մարդասիրաբար պատսպարել արեցութեան պատճառաւ յիմարացած անձերը: Այդ գումարը գլխաւորաբար աղքատ դասակարգերը կը վճարեն՝ որովհետև արեցութիւնը ամէնէն աւելի անոնց մէջ տարածուած է: Օրինակ մը կը բերէ Տօքթ. Հանօթօ, սոյն ցուցակը պատրաստող բժիշկը, որ աւտսիկ. —

Ամէնէն քաղաքը ուր ամէն օր 80,000 գաւաթ օղի կը սպառէ ժողովուրդը, ատոր փոխարէն կը վճարէ 4000 ֆր. ի գումար մը՝ որուն շնորհիւ պիտի կրնար օրական 3,500 քիլօկրամ առողջարար միս և 11,121 քիլօ հաց գնել:

Գէշը հոն է որ Ֆրանսայի մէջ պատրաստուած ալքոլը ամբողջովին արուեստական է, այսինքն կարգ մը քիմիական բաղադրութիւններով շինուած, ինչ որ կրկնապէս վնաս կ'առնէ մարդկային կազմուածքին ու գործարանաւորութեան:

Ինչ մըն ալ խօսինք ալքոլին երեսէն առաջ եկած վնասներուն վրայ:

Առաջին տեղը կը բռնէ յիմարութիւնը և ֆրանսական չարախախտութիւնը հրատարակած վիճակագրութիւնը ցոյց կուտայ թէ 1838էն ի վեր արեցութեան պատճառաւ յիմարացած անձերու թիւը զգալապէս աւելցած է, ինչ որ ընտանիքի մը, տոհմի մը բարոյապէս ու ֆիզիքապէս վատթարանալուն պատճառ կ'ըլլայ:

Նոյն համեմատութեամբ աւելցած է նաև արեցութեան պատճառով անձնասպան և զոհներուն թիւը, — 1868ին՝ այդ թիւը մինչև

չեւ հարիւրին 6ի կը հասնէր. այսօր կը հասնի մինչև 15 առ 100 և ալ աւելի, ինչպէս կ'ըսէ Ճօն — Սքուլինկ:

Պէտք չէ մոռնալ որ ասոնք միջին թիւեր են՝ ընդհանուր բնակչութեան համեմատութեամբ արձանագրուած: Այս ինքնին այնքան պերճախօս թուանշաններուն քով աւելորդ պիտի ըլլար մեր կողմէ ո՛ր և է խորհրդածութիւն մը կցել. այս պատճառաւ կը թողում որ ամէն մարդ իր ուղած կերպով, իր ուղած ձեւով մտածէ անոնց վրայ: Մինակ, նկատելով որ ամէն մարդ, հարուստ կամ աղքատ, մեծ կամ փոքր, կրնալ ամայր (մեր մէջ, փառք Աստուծոյ, կրնորդ գինետոններու մէջ օղի չեն խմեր) ամէնքն ալ կը խմեն, — բացառութիւններ գտնուելով անշուշտ, որոնք փոքր թիւ մը չեն կազմեր բարեբաղդաբար, — անհատապէս և ընդհանրապէս ամէն ոք, հոգիով, մարմինով, ամէն ճիգ և ջանք ի գործ դնելու են կարելի եղած սահմանին մէջ վտանգին առաջին առնել. օրինակի համար՝ անխտիր ամէն եկեղեցիներու մէջ քարոզներով, վարժարաններու մէջ բանաստեղծութիւններով շարունակ հարուածելու է գինովութիւնը:

Դաստիարակը, ծնողքը, մանաւանդ մայրերուն և պղտիկներուն գինովութեան ահռելի հետեւանքները սովորեցնող պարզ ոճով դիւրագին և գրաւիչ հրատարակութիւններ ըլլալու են: Արգելել կտրելոր է, բայց առաջուց արգելել ալ աւելի գերազանց, ա՛լ աւելի կարեւոր է:

Ժօրթ Օնէի Ալֆալպանաուը սրտայոյզ և հետաքրքրաշարժ հատորը (որ իբրև թերթօն թարգմանուեցաւ Արեւելի մէջ) սարսեցուցիչ դրուագներով ի վեր հանած է ալքոլին գործած ծանր աւերները մարդկութեան մէջ, ցոյց տալով այս առթիւ *apéritif!* կարծուած այդ ըմպելիներու անհամար տեսակները Պանֆ ք լ'ալիմանդաւիօի ձեւերու տակ: Մեր երիտասարդները որ աւելի վրան-բաց գրութիւններ կարդալու մարմաջ մը ունին, լաւագոյն կ'ընեն եթէ Ժօրթ Օնէի՝ այդ անուանի հեղինակին գործերը ոչքէ անցունեն, ինչ որ իրենց կրկնապէս օգտակար պիտի հանդիսանայ:

ՏՕԲԹ. Տ. ԱԼԼԱՀԱԿԵՐՏԻ ՈՐԴԻ

ՀԱՅ ԳՐՈՂԻՆ ՆԵՐԱԾԻԱՐՅԸ

Մէկէ աւելի խորհրդածութիւններու նիւթ հայթայթող հարց մը ապահովարար ասիկայ, զոր յուզելու գեղեցիկ մտածումն ունեցաւ Տօմինօ այս էջերուն մէջ:

Առաջին յօդուածով մը(*) փորձուեցայ հայ գրողին կեանքին պարզած ընկերային— բարոյական ինչ ինչ երեւոյթներուն առթիւ՝ անոր խօսքերուն ինչպէս գործերուն միջև հաշտ ներդաշնակութիւն մը տեսնելու աղւոր մտաւարարին ձգտիլ: Այս անգամ պիտի ուզէի հպանցօրէն քննել թէ ինչ պայմաններու տակ կը ներկայանայ հայ գրող մը իր ներքին, մտերիմ կեանքին մէջ և թէ ի՞նչ կրնար ըլլալ մօտաւորապէս՝ այդ միւս կեանքը զոր գրող մը—հրապարակագիր, գրագէտ կամ ամօքօք—կոչուած է ունենալ անպատճառ:

Անկեղծօրէն ըսած ըլլալու համար, կը վախնամ թէ հայ գրողը իր արտաքին կամ առտնին կենցաղէն դուրս պէտք եղած չափով ճանչցած չըլլայ ա՛յն բաղձալի կեանքը զոր ապրիլ մէկն է այն գերագոյն վայելքներէն որոնք երբեք տրուած ըլլան մարդուս:

Ժամանակէ մ'ի վեր, իմ անձնական հայեացքներէս գէթ սա համոզումը կրցած եմ գոյացնել իմ մէջս, թէ մեր գրողներէն շատ քիչերը միայն իրենց դէպի այդ գեղեցիկ կեանքն ունեցած ճաշակն ու հակումը յաջողած են գոհացնել, անոր պահանջած նիւթական պայմանները վայելելով և կարենալով հիւսել իրենց ընտանի յարկին տակ այն տաք ու բարախուն անկիւնի մթնոլորտը որ ա՛յնքան կը համապատասխանէ ճշմարիտ գրագէտի ներաշխարհիկ ապրելակերպին:

«Մասիս»ի մէջ ժամանակին յաջորդաբար երեւցան հայ և ֆրանսացի գրագէտներէն ու մանց աշխատելու եղանակները և կըսպասուէր որ սրադէտ ու խորաթափանց աչք մը ատոնց տարբերութիւնները ցոյց տար մեզի: «Ի՞նչ պէս կը գրեմ»ներու անշուք կամ սովորական ծանօթ շարքին դէմ ջանքի ի՞նչ պատ-

սեական և կայտառ ցուցադրում՝ Ատաններու, Ռոսթաններու, Էռվիէօներու, Ռոնիներու և այլոց հոյակապ աշխատանոցներու լուսաւոր ու զաղջ մթնոլորտին մէջ պարզուածը:

Բայց համեմատութիւնները պահելով, — երբ խնդիրը մերինին պէս միջակ, եթէ ոչ աննշան, գրականութեան մը աշխատաւորներուն վրայ է— և խնայելով իրենց հաշույն այն խոփու խստապահանջութիւնը որ անտարակոյս ծիծաղելի պիտի ըլլար, թողունք որ իրերը իրենք խօսին: Երբ ընդհանրապէս առողջ տրամաբանութիւնն ու ողջամիտ դատողութիւնը կը պահանջեն որ գրագէտ մը իր խօսքերուն հետ կարենայ հաշտեցնել իր գործերը, կը հետեւի թէ անիկայ օժտուած ըլլալու է նաև գեղեցկագիտական ա՛յնպիսի ձիրքերով որոնք իր ճաշակի տէր գրող մը ըլլալը յատկանշեն:

«Je sais tout» Հանդէսին Ա. թիւին մէջ ֆրանսացի ծանօթ գրագէտներու աշխատելու եղանակին նուիրուած չահեկան յօդուածի մը առթիւ, անոնցմէ իւրաքանչիւրը իր աշխատանոցին մէջ ներկայացնելու գովելի մըտածումն ունեցած էր հեղինակը: Եւ պզտիկ անորժով ու քիչ յուզումով չէ՛ր որ պատկերացած տեսանք այն ճշմարտապէս հաճելի բոյները կամ մենարանները ուր, գրողը, ոչ միայն իր հանգստաւէտ պայմաններուն գիտակ և անոնցմով գոհ՝ երանուած լուստեսութեան մը տպաւորութիւնները կրնար ունենալ յաճախ, այլ նաև խորունկ ներշնչութենէ՝ նոյն իսկ զինքը չըլապատող անձերէն կամ իրերէն:

Արդ, հակապատկերը տխուր է, երբ հայ գրողին ներքին, աշխատանոցի կեանքին անդրադառնանք: Եւ քիչ մը չափազանց անվերապահ ու համարձակ պէտք է ըլլալ՝ այս մասին յայտնութիւններ ընելու համար: Կը յիշեմ թէ անգամ մը մեր էն սիրած գրագէտներէն մէկուն տուած այցելութեանս ատեն իր աշխատութեան սենեկին մէջ գտայ ինքզինքս. անկիւն մը՝ մատենադարան մը, բազմաթիւ գրքերով ծանրաբեռն, ա՛յնքան անոնցմով առատ որ նոյն իսկ սան-

(*) Մասիս թ., 12:

դուխներուն ու բազմոցներուն վրայ նետուած կը մնային անոնք, խառնիխառն, անխնամ: Առաջին անգամով մը դիտուած այս երեւոյթը սիրտս սեղմեց: Այս անձաշակ վիճակը կամ անփութութիւնը, եւ միւս կողմէ այդ գրագէտին գրութիւններուն մէջ ոճի եւ գաղափարի մեծ ներդաշնակութիւն եւ ճոխութիւն—ու դեռ չատ մը առաւելութիւններ—գտնուելու պարագան զարմանալի հակադրութիւն մը կը կազմէր:

Զանց կ'ընեմ ուրիշ առիթներու մէջ եւս տեսնուած այսօրինակ հանգիստութիւններ մէջ բերելը, որոնք նպաստաւոր գաղափար չպիտի տային հայ գրագէտին ճաշակին ու ընտրողականութեան վրայ—առանց յիշելու վայելուչ զարդարանքի պարագան ու դեռ ուրիշ կէտեր որոնք անբաժան կը մնան ճաշակաւոր աշխատանոցէ մը: Զգայուն, հոգեկան զանազան վիճակներու մէջ տարուբեր գրագէտին համար ինչ աւելի սիրելի ու մտերիմ քան այն մենաւոր անկիւնն ուր կը կղզիանայ, յուզուելու, գրելու կամ խորհրդածելու համար: Կ'երեւակայեմ զինքը իր սիրական գրքերուն դէպքէն պաշարուած, աչքերը սեւեռաբիւր պաղած երազանքի մը մէջ, տըխուր, անձկագին դիմագծութեամբ մը:— Կամ ընթերցում մը ընդհատելու յանկարծական, տենդոտ շարժումով մը ոտքի նետուելու վրայ: Օ՛հ այդ անկիւնը, Ո՛րքան նուիրական՝ այդ վայրը, ուր իր հոգեւորտային է՛ն արագ բաբախումներն ու էն աղւոր մտածումները կը հնչեն կարծես՝ սահող ժամերուն անգութ լռութեան մէջ մտածել տալով Զօհրային սա տողերուն— փոխաբերաբար առնուած եւ որոնք այնքան կրնան այդ կացութիւնը խորհրդանշել:

«Անկիւն մ'ունիմ սրտիս մէջ ուր

Կ'առանձնանամ ատեն ատեն

Վերյուշումներ երգոր տըխուր

Երկրէս զիս պահ մը կ'անջատեն»:

Սահմանափակ, անշուք, ստուերաշատ աշխարհ մը ապահովաբար՝ հայ գրագէտին ներաշխարհը, ուր կը գտնէ շատ անգամ ինքզինքը, իր առօրեայ յաճախ տալիս զբաղումներէն կամ շուկայի անախորժ պայ-

քարներէն իրիկուան դարձին: Բայց մենաւորանին պարզութիւնն ինչ փոյթ՝ երբ իր սիրտն ու միտքն են որ հոգ կ'ապրին իրենց ամենէն թանկագին պահերը: Շուկայ եւ գրականութիւն, ինչ անհաշտ հակադրութիւն, զոր այնքան կարկառուն եւ իրական գոյներով պատկերեց արդէն Վրիզանթէմ՝ այս էջերուն մէջ: Հիւսացումը, սակայն, հոգ չէ թէ մէկ երկու ժամուան համար, ամէն իրիկուն, այդ անհրապոյր կեանքէն, սրտապնդիչ ու զրաւիչ ընթերցումի մը նուիրուելու համար ուր միտքը՝ խոհանքներ ու խոյանքներ կը սլացնէ ձգտելով անմատոյց տեսլականներու մաքուր ու աննիւթական վայելքին, կամ հոգեկան յուզումնալիք վիճակի մը մէջ, գրական արտադրութեան մը հաճոյքին անձնատուր, այերսալար օղանաւորդի մը զգայութիւններն ունենալը կարծես մերթ, խոստովանինք թէ արհամարհելի սփոփանքներ ու զբօսանքներ չեն:

Սանքիւմանքայ տեսակէտէն դատելով, այս ձգտումնաւոր պատկերէն տարբեր պատկեր մը չպիտի կրնայի չինել մտքիս մէջ անտարակոյս հայ գրագէտին՝ ներքին կեանքին հետ ունեցած վերաբերումին նկատմամբ— ո՛րքան ալ անբաւական ըլլար ան: Անբաւական, անո՛ր համար որ զինքը չըջապատող իրերէն՝ գրքերուն գուրդուրալի մտերմութենէն զատ, ճշմարիտ, անկեղծ ու անխաղախ ուրիշ միտքաբութիւններ, որոնք ա՛յնքան պէտք են իրեն, կը պակսէին:— Եւ ասոնց մէջէն, գրական անսուտ եղբայրակցութիւններու հետ—Կոնքուռները, Մաուկ-ոթիթները, Ռոնինները յիշեցնող—խորեւ ափոփանքի ու ներշնչումի աղբիւր, ինչ աւելի կազդուրիչ ու կենսապարգեւ՝ քան չնորհալի ներկայութիւնը իր մուսայի, խորհրդատուի կամ աշխատակիցի դերին մէջ, արուեստագէտ կամ արուեստասէր հոգիի մը, հրեշտակի մը, կնո՛ջ մը, որ ա՛յնքան զիտէ գրագէտին արտում ժամերը ոսկեղօծել, իր մտածումներու գունադեղ փունջերովը պճեւումը անոր հոգիին յաճախ թափուր մնացած ծաղկամանը:

Բայց փոխանակ այս Ռոսթանաւայել կամ

կոնքուռայատուկ նախանձելի կացութեանց, հայ գրագէտը սովորաբար նիւթական տարբեր պայմաններու մէջ գրելու և աշխատելու ենթարկուած գտած է ինքզինքը: Հաղուած գիւտ բացառութիւններէ դուրս, պիտի կրնայինք համարձակօրէն վստահ ըլլալ թէ հայ գրագէտը յաջողած ըլլար երբեք, գրական ճշմարիտ աշխատանոցի կեանք մը ունենալ—հակառակ շատ անգամներ զայն երազած ըլլալուն:

Եւ այս փայտայելի հեռանկարը՝ հեռանկար մը պիտի մնայ միշտ, ցորչափ գրականութիւն և գրագէտ՝ գործ ունենան նիւթական անգոհացուցիչ պայմաններու հետ: Ասպարէզը աղքատ է, բառին բովանդակ նշանակութեամբ, և երբ գրականութիւն մը չի կրնար իր աշխատաւորները պէտք եղած չափով նպաստաւորել, գրագէտին ներաշխարհն ալ դատապարտուած է յաճախ այնպէս մնալու:

Սխալ չի հասկցուիմ սակայն, եթէ նիւթական պայմաններ չեն ներեր հայ գրողին իր երազած ներաշխարհն ունենալու, փափաքելի էր գէթ որ քիչ մ'աւելի խնամով վերաբերուէր ան բոլոր այն գովելի նախասիրութիւններուն ու ձգտումներուն հետ զորոս ճաշակն ու գեղեցկագիտութիւնը կը տրամադրեն:

Մ. ՌԻՂՈՒՐԵԱՆ

ՅԱՅԳԱՅԻՆ

Կը սիրեմ ես թափառիլ գիշերին մէջ. գիշերին մէջ ուր, այդուն դէմ, երազի անոյ ծաղիկներ, ձիւնէ փթթումներով, կը բացուին հողիներու շուշան համբոյրին. գիշերին մէջ՝ ուր գետեղրին մօտէն լսուող կոչնակին գոնգիւնը կը ծաւալի սարէ սար ու խորհրդաւոր կերպով կ'օրրէ զգացումները:

Կարաւանը կ'անցնի լերան արահետներէն ու բոժոժներու ձայնին միստիք մեղամաղձութիւնը, հեռուն հեռու կը լսուի գիշերին մէջ, որ լուռ է, գիշերին մէջ, որ մթին է և անաւոր:

Եղնիկները, — անըջային ու պաշտելի կենդանիներ, — թեթեւ, թեթեւ, գետափն ի վար կը սուրան, գետափն ի վար՝ որուն մէջ կը ստուերանկարուին, լուսնի լաղուարթային սատափացումներէն, ինչ որ ունին խօլագիծ. ու խուսափուկ, ու անշուշտ՝ երազի մէջ վարչամակուած իրենց ամպային ձեւերը: Ու իրենց մեղրիկ նայուածքներուն լոյսը կ'առկայծի գիշերին մէջ որ լայն է, հեշտագին ու համասլարփակ:

Ու բոլոր մրտենիները, բուռումնալիր, դալար համբոյրներ կը սօսաւեն հոլանի միջոցին մէջ: Պարզկայ գիշերուան սիւքը կ'անցնի տերեւախիտ թաւուտքին ձիւղ սրտին ընդմէջէն, սարսուռներ պտտցնելով հոն: Ու ես կը մտածեմ, աչքերս կիսափակ ու յոգնած, գլուխս քարի մը յեցած, և հոգիս հեշտանքով ու տենդով լեցուն, ես կը մտածեմ...

Հո՛վը, գինով աղջիկ մըն է կարծես հովը, ծփացիկ պարեգօսով հո՛վը, գիշերուան դուռնար ու բուռումնաւէտ հովը, որ ջուրեւրուն վրայ խօլ ու տատանուող չըջպար մը կը դառնայ յուրօրէն, գիշերին մէջ՝ որ ցըրտին է ու դողդոջուն:

Կը սիրեմ ես թափառիլ, քու հողիդ գիշերին մէջ, ո՛վ կին, գիշերին մէջ քու հողիդ, որ տրտում է և անաւոր, լայն ու հեշտագին, կըքոտ ու խանդաբորբ, ցրտին ու դողահար...:

Մ. Կ. ՄԵՐԱՏՈՒՐԵԱՆ

ՍՏԱՅԱՆՔ՝ Մուշեղ էֆ. Բէշիշեանի Բաղախակն Տնտեսագիտութիւն հատորը, որ հեղինակին «Առեւտրական Գիտելիք» անուն ներքե հրատարակել ձեռնարկած երկասիրութեանց շարքին երկրորդ մասը կը կազմէ և օգտակար պարունակութիւն մը ունի: Վաճառման արդիւնքին կէսը յատկացուած է Ուսուցչաց Օգնութեան Մատուցին: Գին 10 ղրշ.: Կեդրոնատեղի Ն. Կ. Պէրպէրեան տպարան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Պ. Կ. ԵԶԵԱՆՑԻ ՅԵՇԱՍՏԱԿԻՆ

Նախորդ շաբթուն վերջը, Ազգ. Պատրիարքարանի կողմէ հետեւեալ Մահազդ—
Հրաւիրագիրը ցրուեցաւ բարձրաստիճան
կղերին, Վարչութեան անդամներուն, Տեսուչ
Խորհուրդներուն, Հոգաբարձութեանց, Խնա-
մակալութեանց և բոլոր ծանօթ անձնաւո-
րութեանց ու լրագրագետներուն։—

«Սանատարեան վարժարանի Խնամա-
կալութիւնը և Յ. Ի. Գրական Յանձ-
նաժողովը ցաւով սրտի կը ծանուցանեն
թէ վերջացեալ Մայիսի 31ին յանկար-
ծական մահուամբ վախճանած է ի Պե-
տերբուրգ ՎՍԵՄ. ԿԱՐԱՊԵՏ Յ. ԵԶ-
ԵԱՆՑ և թաղումը կատարուած է ամ-
սոյս 2ին։

«Ի յիշատակ բազմերախտ հանգու-
ցելոյն՝ հանդստեան կարգ պիտի կա-
տարուի Բերայի Ս. Երրորդութիւն ե-
կեղեցին, մահուան ութօրէքին, որ
է առաջիկայ երեքշաբթի, յունիս 7,
առաւօտեան ժամ 3ին, յետ աւարտման
Ս. Պատարագի։

«Հաճեցէք Զեր ներկայութեամբ
յարգել Արժանաւոր Հանգուցելոյն յի-
շատակը»։

Խոռոն և ընտրեալ բազմութիւն մը փու-
թացած էր անձամբ պատասխանել այս հրա-
ւիրագրին, երեքշաբթի առաւօտ ներկայ
գտնուելով Ս. Երրորդութիւն եկեղեցին, ու-
րուն Տաճարը վերապահուած էր հրաւիրեալ-
ներուն և մնացեալ մասը երկսեռ ժողովրդ-
եան։ Եկեղեցական դասէն ներկայ էին Տ.
Մեսրոպ արքեպիսկ. և Տ. Հմայեակ, Տ.
Գէորգ Երէցեան, Տ. Եղիշէ Դուրեան, Տ.
Մկրտիչ, Տ. Արիստակէս եպիսկոպոսները,
բազմաթիւ վարդապետներ ու քահանաներ։
Ազակիր կեցած էին դասին մէջ, Սանատար-
եան վարժարանի Խնամակալութեան և Յով-
սէփ Իզմիրեանց Դրական Յանձնաժողովին
անդամները։ Ներկայ էր նաև ռուսական
դեսպանատան կողմէ թարգման մը, Պատ-
րիարքարանի հրուէրով։

Ս. Պատրիարքը Պատարագ մատոյց
և նախագահեց հոգեհանգստեան հանդիսաւոր
Պաշտօնին, որմէ ետք պերճախօս դամբանա-
կան մը արտասանեց, ներկայացնելով հան-
գուցեալ եղեանցը իբր պետական պաշտօնա-
տար, իբր եկեղեցասէր, գրասէր և կրթա-
սէր Հայ և իբր ներշնչող ու թելադրող բա-
րեյիշատակ Մկրտիչ Սանատարեանցի և Յով-
սէփ Իզմիրեանցի կտակներուն։ Հանգուց-
եալը՝ Մոսկուայի Լազարեան Ղեմարանին և
Բեդերսպուրկի Համալսարանին մէջ յաջող
ընթացքներ բոլորած և իբրև Մագիստրոս
ակադեմական պատիւներով ճոխացած, իբրև
արեւելագէտ, բանասէր ու պատմաբան եր-
եւելի հանդիսացած է, և ռուս կառավարու-
թեան կողմէ միշտ ինք ներկայացուցիչ եղած
է Արեւելագիտաց Միջազգային Համաժո-
ղովներուն։ Ս. Պատրիարքն յիշեց թէ
Պ. Եղեանց ինչ տաք սրտով կը վերաբեր-
ուէր դէպի Մայր Աթոռ և անոր անձուկ
օրերուն մէջ խորհրդատու էր և դժուարու-
թեանց մէջ ելից հնարներ ցուցնող անկեղծ
հաւատացեալ զաւակն էր Եկեղեցոյ։ Կրթա-
կան զարգացման վրայ իր հաւատքն էր նաև
որ զինքը կը մղէր օգնութեան ձեռք կար-
կառելու ուսումնաստենչ նոր սերունդին, և
իր շնորհիւ բազմաթիւ հայ երիտասարդներ
ուսում ստացած են Համալսարաններու մէջ։
Ինք երբեք հարուստ չեղաւ, բայց իր սիրան
հարուստ էր, և իրեն միջոցներ կը թելադ-
րէր Ազգին հարուստ անհատներուն բարի
խրատներ տալու և առաքինութեան ու բա-
րեգործութեան արարքներու մէջ անոնց ա-
ռաջնորդ ըլլալու։

Պատրիարքական քարոզը որ իբր երեք
քառորդ ժամ տեւեց, խոր տպաւորութեամբ
համակեց բոլոր ներկաները։

Յաւարտ հոգեհանգստեան արարողու-
թեան, Ս. Պատրիարքը կրկին ցաւակցական
հեռագիր ուղղեց առ Պ. Պօկտանով, մօտա-
ւոր ազգական Պ. Եղեանցի Բեդերսպուրկ։



ՔԱՒՇԱՆՃԵԱՆ-ՄՐՅԱՆԱԿԻՆ ՇՈՒՐՁԸ

Վերիպակ մը որ... 10 ոսկի կ'արժէ:

Կատակ մը կամ սրամտութիւն մը ընել չէ նպատակնիս, այսպէս գրելով: Իրօք, գրաշարական անուշադրութեամբ, տող մը «փախցուած» կամ վրիպած է եղեր Մասիսի 11րդ թիւով (մայիս 7) հրատարակուած Յովհ. Էֆ. Թաւադեանի նամակէն որ կը պարզէր իր հաստատած հակալքողական մրցման պայմանները: Եւ ճիշդ այդ տողը կը վերաբերէր թերթերուն ստանալիք երկրորդ 10 ոսկիի գումարի մը, որուն յիշատակութիւնը կը պակսէր հրատարակուած յայտարարութեան մէջ, թէ և ընագիրը ճիշդ ըլլար: Թաւադեան Էֆ. ինքն իսկ ձանձրոյթը յանձն առեր է երկտողով մը խմբագրութեանս ուշադրութեան յանձնարարելու այս թերին, զոր կը փութանք ուղղել:

Մասիս, Թ. 11, էջ 165—166, սապէս պէտք է կարդալ հետեւեալ պարբերութիւնը.—

«Ա. մրցանակը ստացող յօդուածը հրատարակող թերթը պիտի ստանայ 10 անգլ. «ոսկի»: Բ. մրցանակը ստացող յօդուածը «հրատարակող թերթը պիտի ստանայ 5 անգլ. «ոսկի»: Ասոնցմէ զատ, վերոյիշեալ 12 հատ «մրցանակ ստացող յօդուածներուն առաւել» «լազոյն թուովը հրատարակող թերթը պիտի ստանայ 5 անգլ. «ոսկի» և այլն:

Այս թերին լրացնելէ յետոյ, պէտք է աւելցնենք թէ խմբագրութեանց կողմէ՝ իրենց ստանալիք գումարին փոխարէն «կարօտ կամ արժանի անձանց կամ հաստատութեանց նուիրուելիք թերթերուն գումարը պիտի հաւասարի 30, 25, 20, 15 կամ 5 անգլ. «ոսկեոյ, ըստ պարագային» և ոչ թէ «20, 15, 10 կամ 5 ոսկեոյ» միայն, ինչպէս տպագրուած էր սխալմամբ:

Մրցման նիւթական պայմանները կ'ամբողջացուին այս ուղղումով (correction) և մեզի ուրիշ բան չի մնար ընել՝ բաց եթէ մաղթել որ հնար եղածին չափ լաւագոյն յօդուածներ յաջորդեն իրարու մեր թերթե-

րուն մէջ, մինչև Հոկտ. 1 (ն. Տ.) յորում պիտի փակուի այս գրական մրցումը:

«ՔՐԻՉԱՆԹԷՄ ԻՆՆՈՒ չի գրեր» կը հարցնեն մեզ ամէն կողմէ: Իր վերջին յօդուածը՝ Գրականութիւն եւ Շուկայ՝ թերեւս ենթադրել տուաւ ոմանց թէ, առեւտրական ասպարէզին մէջ գործ մը ստանձնած ըլլալուն, սրամիտ քրոնիկագիրը այլևս հրաժարական կուտայ գրականութեան: Կրնանք վստահցնել մեր բազմաթիւ ընթերցողները, ամէնքն ալ համակրող Քրիշանթէմի, թէ պարզապէս աչքի թելթել ու անցողակի տկարութիւն մըն է որ կ'արգիլէ զինքը գրել շարժել, բժշկական պատուէրով, և թէ քանի մը շաբաթէն պիտի կրնայ վերսկսիլ իր աշխատակցութիւնը Մասիսին:

ՍՈՒՐԷՆԵԱՆ ՏԵԱՐՑ կրտսեր եղբայրը՝ Արշակ Էֆ. Սուրենեան, որ չորս տարի է վեր Բարիզ կը գտնուէր՝ Ատամնաբուժական վարժարանին դասախօսութեանց հետեւելով, յաջող քննութիւններով իր վկայականն ստացած ու գործնական ուսումնասիրութիւններ ալ կատարած, մայրաքաղաքս վերադարձաւ ուր պիտի հաստատուի:

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՉԱԿՅԻ յանձնած է մեզ իր Աբեղաձագ յԱՐՄԱՑ «Կցկտուր Յիշատակներ»ուն երրորդ մասը որ կը խօսի Դպրեվանքին հաստատման վրայ: Յաջորդ թիւով պիտի հրատարակենք այդ շահեկան գրուածքը: — Նոյնպէս յաջորդ թիւով՝ Հայ գրագիտութիւն՝ Ֆրանսական գրականութեան մեզ, մեր աշխատակից ԼԵՒՈՆ ՔՐԻՇՃԵԱՆԷ:

Պ. Բ. ԱԲԷՌԻԻ հակալքողական երկրորդ յօդուածը յաջորդ թիւին յետաձգել հարկադրուեցանք, թարգմանութիւնը ամբողջացած չըլլալուն:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻՆՃԵԱՆ
ՏԵՐ ԵՒ ՏԵՐԵՆ—ՏՈՒՔ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնադրված է 1875 թ. ի ԲԱՐԻՉ
կը գործէ ուղղակի ճրանգ. կանա-
վարութեան հսկողութեան ներքին
Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագումարիս եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼԵԱՆՆ

Պոլիս, Հանգրույց խան Եօ. 53.
Կառավարող պատուաւոր գործակալներ կը
փնտռուին: 15—50

ՆԱԶԱՐԻԹ ԻՍԶԵՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբուհար. Պարնաթան խան
Թիւ 26

Այն կարգի դատեր կը ստանձնէ եւ
խնդրոյ առաքելոյ եղած գործերու համար
թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կործիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դատերու եւ առեւտրական ու սովորական
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:
Ուրբաթ օրերը եւս մինչեւ կէս օր ձգտա-
րար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կոր-
ծիք կը յայտնէ:

Օսմ. անօթիմ բնակչութեանց բնդհանուր
ժողովոց մէջ բաժնեւէրերը առանց վարձի
կը ներկայացնէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրակ:
Բնակչութեանց նկատմամբ անհրաժեշտ եղ-
ած եղեկութիւնները ձեռք բերող կուտայ, եւ ոչ
լանձնաբարձ օր մինչեւ օր այս մասին կեղե-
րուր եղած անեղեկութիւնները իրմէ չստաց-
ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
Ապահովագրական վճարուց հասուցման գու-
մարներու եւ փոխաբովանդրութեան գտնաւոր
եւս կը ստանձնէ:

Իսկ վարձքի մասին զիւրաւթիւն եւս
ժողովութիւն կ'ընթացէ:

4—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ
Դո. Եօ. Եր. օրերը առաւօտեան կանու-
խան մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
Բո. Դո. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2
Կիրակի օրերը ժամադրութեամբ 3—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



Հիմնադրված է 1782 թ.
Եւ Գործի Ի Պոլսոյ 1869 թ. Ի Վեր
Ունդ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Դրամագումարիս եւ պահեստի դրամ
Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ասոյ կրքեհի դէմ Ապահ-
վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ վճարուց մէջ
իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ կրքեհի եւ
կայծակի դէմ մայն տեսակ տնտեսք եւ
շարժան ստացուածք, յոյժ նպատաւոր
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ: Ցաւ դժու-
րած է առաւել քան 27,000,000 տնգլ.
ապի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւա-
ռաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերայիս խան, Պանգ Օրօմանի փոյ
Ղալաթիս:

Փոխ գործակալ Ե Պոլիս

ԻՌԻՐ. ԱՐԻԿԵԱՆ ԺԻՎԱՆ ԹԵՔԵԱՆ

Եմքն պիլ խան Յնգլիան խան

45 Զննիչ բողոքու

40—50 Ա. ԻՆՔՍԻՐՃԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՆԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպատաւոր պայպաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անհիշելի վնասում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսնաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անհիշք, որ հաւաքումներու բարգաւաճում (accumulation d'es bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մանածիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: — Գործակալութիւնք Թուրքիոյ զլխաւոր

քաղաքաց մէջ

6—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԼԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային ահապաններու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:


Սոյն ընկերութեանց Դրամասունքն է Ի Կ. Պոլիս, Գոքսի Լիօնէ

Ընդն. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրսեմեակ, Պոլիս, Ալեքսանդր Խան,

6—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

• The Singer Manufacturing Cie.

Ջեռֆի, ուսփի ու ուսփի եւ ձեռփի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՐԱՐԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱՆԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵՐԻՏԱՐ | | Չարչը Պօլս, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն:

Մասնահիւրեր գաւառաց բոլոր ֆաղաֆներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

8-10

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թ-րգ.		Սրբաբնութիւն տղան	3	15
մանած գիրքերէն հետեւեալները կը գրու-		Հանրակառքին օճիւրը	1	5
նուրին Տէր-Մինասեան գրատունը եւ մայրա-		Սկզբունք Բող. Տնտեսութեան	1	4
քաղաքիս միւս հայ գրաւորներուն քով.		Ընտանեկան գաղափարներ	3	15
հասոք		դրո.		2-10
Կարմիր մարդոց երգումը	2		10	
Ընտանեկանը	2		15	
Փարիզի ամուսնութիւնները	1		2	
Թափառական Հրեայ	4		50	

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱՍՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃՋԱՌՈՒՄ

Գոհարեղեցներու, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւն անոանեւ
հազուսներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց
ապրանքներուն տեսակները աւելի ճշմարտեմբով եւ մեր յարգելի յաճախորդաց աւելի գո-
հացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ
զառ. կիներու եւ այրերու համար՝ եւ մէջ ու փոքր ամէն տարիքի յառակ ՉԳԵՍՏԵՂԵՆ-
ՆԵՐՈՒ. ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) եւ միտնգամայն ամէն տեսակ առաջնակարգ
ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամաներ, օֆիսէներ եւ այլն.) ճիս մթերանց մը հաստատած
ենք. խիստ գիւրամատչելի գիներով, եւ կանխիկ եւ ապառիկ պայմաններով:
Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիշեալ վա-
ճառատուները, օւրկէ տնտեսական անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱԾՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին
- 5 շաբաթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներու համար հարիւրէն 5 զեղչ:
3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները եւր գոր-
ծածուած բայց ա՛յլնա մնացած բլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կառնուին: Իսկ ապա-
ռիկ ծախում եւ ա՛յլնա մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին
15 զեղչով եւ կառնուին:

4-10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջտ պատրաստ են:
ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի կայս. Ուքազով արտօնուած

Կեղրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի
ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՅԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառ,
բուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-

314,768,000 »

գլուխ եւ վնասուց հատուցում

56,585,800 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրոս

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան

4-10

խան, Վոյվոտա, Ղալաթիա,